<<Արզնի առողջարան>> ՓԲԸ

ՀՐԱՄԱՆ №263Լ

29.12.2014թ. գ. Արզնի

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ Օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները և ղեկավարվելով Ընկերության կանոնադրությամբ.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել ընթացակարգ Ընկերությունում գործող ծառայություններից հրաժարվելու, առողջարանից վաղաժամկետ մեկնելու և ամրագրման կանխավճարի վերադարձի մասին հետևյալ դրույթներով.

1.1 Ընկերության ծառայությունների դիմաց (հետազոտություն, բուժական պրոցեդուրաներ, և այլն) վճարված գումարը ենթակա չէ վերադարձման, նույնիսկ եթե հաճախորդը հրաժարվել է հետազոտվել կամ մասնակցել բուժական պրոցեդուրաներին:

1.2 Առողջարանից վաղաժամ մեկնելու դեպքում՝ առնվազը երեք օր առաջ ընդունարան դիմելու պարագայում, հաճախորդին կվերադարձվի առողջարանային բուժման և հանգստի դիմաց վճարված և/կամ չօգտագործված գումարի տարբերությունը, հակառակ պարագայում մեկ օրվա չօգտագործված գումարը ետ չի վերադարձվում:

1.3 Ընկերությունում սենյակի ամրագրման հայտ թողնելու դեպքում հաճախորդը պարտավոր է կատարել կանխավճար՝ նվազագույնը մեկ օրվա արժեքի չափով (ըստ սենյակների համար սահմանված սակագնի): Ամրագրումը չեղարկելու դեպքում վճարված կանխավճարը ենթակա չէ վերադարձման:

2. Կադրերի տեսուչ Ռ. Ոսկանյանին՝ սահմանված կարգով և պատշաճ ժամկետում համապատասխան աշխատակիցներին ծանուցել սույն հրամանին և տեղադրել Ընկերության կայք էջում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 01.01.2015թվականից:

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ **ԱՐԱՐԱՏ ՄԱՀՏԵՍՅԱՆ**